


# Ո՞ւր է իմ պանիրը

Սպենսեր Ջոնսոն

# Գրքի պատմությունը

Պատմության մեջ նկարագրված չորս երևակայական հերոսները՝ մկները՝ Հոտառուն ու Վազկանը, և Փոքրիկ մարդիկ՝ Հըմն ու Գըմը', միտված են ներկայացնել մեր պարզ և բարդ կողմերը՝ անկախ տարիքից, սեռից, ռասայից կամ ազգությունից:

Երբեմն մենք կարող ենք մեզ պահել ինչպես Հոտառուն,

Ով շուտ է առնում փոփոխության հոտը, կամ Վազկանը,

Ով արագ մղվում է գործողության, կամ Հըմը,

Ով մերժում և դիմադրում է փոփոխությանը, քանի որ վախենում է, որ այն ինչ-որ ավելի վատ բանի կտանի, կամ Գըմը,

Ով ժամանակին սովորում է հարմարվել, երբ տեսնում է, որ փոխվելը կարող է բերել ավելի լավ բանի:

Մեր որ հատկանիշներն էլ որոշենք օգտագործել՝ մենք բոլորս մի ընդհանուր շարժառիթ ունենք, այն է՝ Լաբիրինթոսի մեջ մեր ուղին գտնելու և փոփոխվող ժամանակներում հաջողության հասնելու անհրաժեշտությունը:



# «Ո՞ւր է իմ պանիրը» պատմության ֆենոմենը

«Ո՞ւր է իմ պանիրը» պատմությունը ստեղծել է դոկտոր Սպենսեր Ջոնսոնը՝ կյանքի բարդ փոփոխություններից մեկը հաղթահարելու նպատակով:

Երբ ընկերները նկատում էին, թե ինչքան էր նրա կյանքը բարելավվել, և հարցնում էին պատճառը, նա պատմում էր իր «Պանրի» պատմությունը: Նրանցից մի քանիսը տարիներ անց ասում էին, թե որքան է այդ պատմությունն օգնել իրենց պահպանել հումորի զգացումը, փոխվել և իրենց համար ինչ-որ ավելի լավ բան ձեռք բերել: Նրա «Նոր՝ մենեջեր «Մեկ րոպեն»» գրքի համահեղինակ Քեն Բլանչարդը հորդո- րեց Սպենսեր Ջոնսոնին վերջապես այդ պատմությունը հրատարակել, որպեսզի այն շատերին հասու լինի:

Գիրքը հրատարակվեց պատմության ստեղծումից երկու տասնամյակ անց: Այն շուտով դարձավ թիվ 1 բեսթսելլերը. 1 միլիոն տպաքանակ՝ առաջին 16 ամիսների ընթացքում և ավելի քան 21 միլիոն տպաքանակ՝ հաջորդ հինգ տարիներին: 2005թ. «Ամազոն» կայքը (Amazon.com) հաղորդեց, որ «Ո՞ւր է իմ պանիրը» բոլոր ժամանակների իրենց ամենալավ վաճառված գիրքն է:



Իմ կարծիքը


Շնորհակալություն